

ու բարեգործական ճաշերը: Կենաց զանազան պարագայից եւ տարւոյն այլ եւ այլ սրբազան յիշատակաց մէջ, ուր սընունդն իւր բաժինն ունեցած է միշտ, ճաշի պատրաստութիւնք ու կոչումներն անգամ եւ կերակրոց տեսակները կը զանազանէին իրարմէ: Վերջապէս օրինական տարբերութիւն մ'ալ կար ուտելի և խորշելի կերակրոց մէջ:

Վերեւ լեզուաբանական տեսակէտն յիշեցի: Եւ արդարեւ սպասուց եւ կահուց, ուտելեաց եւ այլ նոյնպիսի յատուկ բաներ՝ մեր հին մատենագրութեան մէջ բացատրութեանց չքաւորութենէն շատ անգամ անորոշ մնացած են, եւ մերթ սխալ իսկ իմացուած՝ արդի հայագիտաց ու բառագրոց կողմանէ: Ապահովագոյն ճանապարհն համարեցայ՝ նախնեաց թարգմանութեանց ձեռքով համեմատել զանոնք օտարազգի հոմանշերու հետ՝ ուր որ կային, եւ անոնց հնախօսական նկարագրաց մէջ, թէեւ ասոնք միշտ որոշ չեն, որոնել մերոց ալ մերձաւոր սահմանը: Դժուարին ձեռնարկ մը, եւ ասոր համար ալ թերեւս ոչ անթերի, զոր մասնագիտաց կը մնայ դատել:

Մեր նիւթն ուրեմն կը պահանջէ առանձին ու մտադիր հետազօտութիւն մը,